




Տարեկան դիմել 10 րուբլի, կես տարվանը 6 րուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան ՎՋ:
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարությունը ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարությունները համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կոպեկ:

ՆԵՐՎԱՆ 1889 ԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԴՐԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԲԱՆԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼՐԱԿԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն ղրքով և նոյն պրոպագանդայով Միք ստանում ենք սեփա-
կան ՀԵՌԱՎԱՆՈՒԹՅԱՆ:
«ՄՇԱԿ» տարեկան դիմել 10 րուբլի է, վեց ամսվանը 6 րուբլի:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱՎԱՐՈՒԹՅԱՆ (Բաղնիկայա և Բաղրաբայա փողոցների անկի-
նում Թամազիկի տանը):
Կայտարարությունները «ՄՇԱԿ»-ը գրվելու համար պետք է դիմել հետևյալ հա-
ցեն. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆՈՒՆԻ

ԲՈՎԱՆՈՒԹՅԱՆ ԼՐԱԿԻՐ

Բաժնի մասվան տարեգրքի մասնաշարը.—
ՆԵՐՎԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ. Ներքին Լուրեր.—ԱՐՏԱ-
ԲԻՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ. Մալաբարի միջնաբերդի մաս-
նաշարը. Արտաքին Լուրեր.—ԽՍՈՒՆ
ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱՎԱՆՈՒԹՅԱՆ.—ԲՈՐՈՍԱ.—ՅԱՅՏԱՐՈՒ-
ԹՅԱՆ.—ԲԱՆԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ. Ներքին կեան-
քից յիշողություններ.

ԲԱՅՏԱՐՈՒԹՅԱՆ ԼՐԱԿԻՐ

Բաժնի մասվան տարեգրքի մասնաշարը.—
ՆԵՐՎԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ. Ներքին Լուրեր.—ԱՐՏԱ-
ԲԻՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ. Մալաբարի միջնաբերդի մաս-
նաշարը. Արտաքին Լուրեր.—ԽՍՈՒՆ
ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱՎԱՆՈՒԹՅԱՆ.—ԲՈՐՈՍԱ.—ՅԱՅՏԱՐՈՒ-
ԹՅԱՆ.—ԲԱՆԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ. Ներքին կեան-
քից յիշողություններ.

Որքան են հաւաքել ուրիշները.—մեզ
յայտնի չէ: Հետաքրքիր կը լինէր իմանալ
մանաւանդ, ո՞րքան են հասնում մահա-
ձանի համար հանգանակված ընդհանուր
գումարը, որպէս զի վերջապէս ձեռնա-

մուկ լինելիք Բաժնի գերեզմանի վրա
արձան դնելու:

Մեր կարծիքով ամենէն հարկաւոր չէ
մի շատ թանկագին մահաձան. մեր կար-
ծիքով 1,000—1,200 րուբլի արժեքող մա-
հաձանով պէտք է բաւականանանք: Թան-
կագին մահաձաններ սաղում են այն
հանգուցեաներին, որոնք իրանց կենդա-
նութեան ժամանակ բացի շատ փող ունե-
նալուց ուրիշ ոչինչ արժանաւորութիւն
չեն ունեցել: Իսկ մտաւոր կեանքով ապրած
մի մարդու համար, մտքի մարդու հա-
մար, որը իր ամբողջ կեանքը ապրել է
գաղափարով, որը թէ իր հայրենակիցնե-
րին և թէ իր ընտանիքին ոչ փող, ոչ
կալուածներ է թողել, այլ թողել է միայն
գաղափարներ, թողել է գրքեր,—այդ տե-
սակ մարդու գերեզմանի վրա ամենից յա-
մար է դնել մի համեստ մահաձան, քանի
որ այդ տեսակ մահաձանի ամենամեծ
գարգաւանքը մեռածի անուան է: Նոյն
իսկ մի քանի մի ժայռի մեծ կտոր, որը
վրա ոսկեայ մեծ տառերով փորագրված
լինի «Բաժնի» անունը,—աւելի շքեղ և
մեզ համար աւելի պերճախօս արձան կը
լինի, քան թէ հարուստների գերեզմաննե-
րի վրա շինված հազարներ և հազար-
ներ նստած, զոյնզոյն քարերից, մարմա-
րիցից՝ նուրբ զարդարանքներ ու բազմա-
տեսակ փորագրութիւններ կրող թանգա-
զին դամբարաններն ու մատուռները...

Բաժնի արձանը թող համեստ լինի,

իսկ հանգանակած փողերի մեծ մասը թող
գործադրվի հանգուցեանի անտիպ մնացած
և արդէն հրատարակված ու այժմ սպառ-
ված աշխատութիւնների հրատարակման
վրա:

Հանգուցեանի հրատարակութիւնները մի
կողմից և նրա երկու զաւակները միւս
կողմից,—աւելի թանկագին, աւելի նշանա-
ւոր արձաններ են մեզ համար, քան թէ
անշունչ քարը: Նրա գրուածները և նրա
զաւակները,—ահա կենդանի արձաններ,
որ հանգուցեանը մեզ թողել է: Նրա
հեղինակութիւնները համ կը շարունակեն
միայն, դարձաւոր տարածել մեր մէջ, համ
էլ ծախվելով ու ժողովրդի մէջ տարածվե-
լով՝ միջոց կը տան հանգուցեանի ընտանի-
քին հայթայթելու իր համեստ ապրուստը,
միջոց կը տան Բաժնի երկու զաւակնե-
րին մարդավայել ուսում, կրթութիւն ըս-
տանալու:

Անուրանալի է որ հայոց հասարակու-
թեան պարտաւորութիւնն է մի, թէ և
համեստ, արձան դնել հանգուցեանի գե-
րեզմանի վրա, բայց նրա զիւստուր պար-
տաւորութիւնն է՝ ոչինչ նիւթական մի-
ջոցներ չը խնայել ամենալաւ ուսում տա-
լու Բաժնի երկու զաւակներին, որպէս
զի նրանք արժանի դառնան իրանց հօր
յիշատակին:

Ինամբ տանելով Բաժնի երկու զա-
ւակներն ուսման վրա, հայոց հասարա-
կութիւնը դրանով կը կանգնեցնի հանգու-
ցեանի յիշատակին մի աւելի փառաւոր, մի
կենդանի, մի անջնջելի արձան,—քան թէ
այն արձանը, որը շինված է անշունչ, մե-
ռած, սառն քարից...

Քարը,—քար կը մնայ: Իսկ ազդի հաշ-
ւով կրթութիւն ստացած Բաժնի որդի-
քը ոչ թէ միայն նոյն ազգի պիտանի ան-
դամներ կը դառնան, բայց գուցէ ժառանգ-
րած լինելով իրանց հօր տղաները, կարող
կը լինեն ժամանակով իրանց հօր նման
հրատարակութեան և օգտուէտ և նոյն իսկ
նշանաւոր գործիչներ դառնալ:

Ո՞վ է ասում թէ արձանը հարկաւոր չէ,
նա հարկաւոր է, թէ և մեր դարձեալ
պիտանի ենք, որ համեստ պէտք է լինի
բայց Բաժնի յիշատակին մեր հանգանա-
կած և հանգանակելի նիւթական միջոց-
ների մեծ մասը գործ զննելով նրա գրքերի
հրատարակութեան և նրա զաւակների
կրթութեան վրա,—մենք դրանով Բաժնի

յիշատակին կը կանգնեցնենք մի աւելի
փառաւոր, մի կենդանի արձան, դրանով էլ
աւելի գործնական, աւելի շոշափելի երախ-
տագիտութիւն յայտնելով մտաւոր քաջ
գործիչի յիշատակին:

Գ. Ա.

ՆԵՐՎԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ

ՆԵՐՎԱՆ ԼՈՒՐԵՐ

Գրականական ազնւութեան վրա խոսողը,
պէտք է իր աւուշը ունենայ ազնւութեան
վրա խօսելու: Իսկ այդ իրաւունքը վաղուց է
արդէն կորցրել է «Արձագանքի» խմբագիր-
հրատարակիչ, պ. Աբգար Յովհաննիսեան:
Միայն մարդիկ Աբգար Յովհաննիսեանի, կամ նրա
վկայ և ընկեր Շիրվանզադէի պէս կարող են
իրանց թոյլ տալ, դուր տեղ և անապացոյց
կերպով ամբաստանել ուրիշներին: «Արձագանք»
յանդգնում է անամօթաբար պնդել որ մենք
«Մշակի» № 9-ի մէջ գետնգլած Բաժնի յօդուա-
ծը տպեցինք աղաւաղելով այդ յօդուածը և
այն էլ տարգի կերպով: Աբգար Յովհաննի-
սեան «այսօրվայ լոյսի պէս յիշում է որ Բաժնի
յօդուածի մի նշանաւոր մասը ուղղված էր Աղա-
յիսեանի դէմ»: Կամ պէտք է կարծել որ պարոնը
երբեք չէ տեսել յիշեալ յօդուածը, կամ նրա ա-
սօրվայ լոյսը շատ խաւար է և այդ լոյսի
հետ էլ շատ խաւար է և նրա յիշողութիւնը:
Մենք Բաժնի յօդուածը, որը գրված է ստորա-
գրված է հանգուցեանի սեփական ձեռքով, տպե-
ցինք ամբողջութեամբ, ինչպէս նա կայ, բացի
մի տառի և երկու տողերից, որոնց չը տպեցինք
հանգուցեանի այբբին խնդրելով և որոնք
անձնական յարձակումնք էին դեռ ևս կեն-
դանի երեք հայ գործիչների դէմ: Այդ տողերից
միայն մի տող վերաբերվում է Աղայիսեանին,
իսկ մնացածները կէտ վերաբերվում է մի ար-
դէն գոյութիւն չունեցող լրագրի աշխատակցին,
միւս կէտն էլ «Բորձի» և «Արձագանքի» մի աշ-
խատակցին: Ո՞ր մնաց ուրեմն Յովհաննիսեանի
և Շիրվանզադէի պէս ստախոսների ասածը, որ
իբր թէ յօդուածի նշանաւոր մասը վերաբեր-
վում էր Աղայիսեանին: Կարծում ենք որ ամբողջ
12 փելիտօսական սիւնակներից բաղկացած յօ-
դուածի մէջ մի տող չէ կարող կազմել յօդուա-
ծի նշանաւոր մասը: Եթէ Աբգար Յովհաննի-

ԲԱՆԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՆԵՐՎԱՆ ԿԵՄԱՐԻՑ

ՅԵՐՈՂՈՒԹՅԱՆՆԵՐ

III

Արեւիկ մէջ մտնելով ընտելեան գանաղան
տեսարաններ՝ հասայ Յարակիէ-Կօլօցցի, կամ
ինչպէս ժողովուրդն է անուանում՝ Թուրքուրմի-
շա ուստաբնակ դիւղը, որը գտնվում է Թամար-
նա գետի ափերից հինգ վերտու հեռաւորու-
թեան վրա՝ դէպի հիւսիս շատնելուն պէս հին
բարեկամներից մէկը խորհուրդ տուց, մինչև
անգամ խնդրեց անպատճառ նկարել այդանդի-
ժողովրդի մէջ յայտնի փիտոյի կերպարանքը: Թէ-
պէտ առհասարակ մարդկանց՝ դէմքեր նկարելը չեմ
սիրում, սակայն մի ամբողջ խումբ երիտասարդնե-
րին գուարճութիւնից չը զրկելու համար, վճուեցի
նկարել հուշակված փիտոյի դէմքը:

Մի քանի ժամից յետոյ փիտոն կանգնած էր
առջևս: Նա ձայն առնել ծածկելով և բերանը
ծռուելով՝ շարունակ ջրորում էր գլուխը և յիմար
ժպիտը՝ երեսին նայում էր ինձ: Նա մօտ քսան և

եօթ տարեկան երիտասարդ վրացի էր, նիհար
հիւանդոտ կազմուածքով: Թէպէտ նրա արտաքին
տեսքը ակամայից ծիծաղ էր շարժում, սակայն
մի և նոյն ժամանակ առանց խղճալու չէի կա-
րողանում նայել թշուառ արարածին.—նա խե-
ղաքար էր:

—Կուրցն պատկերել նկարիս, հարցրի վրացերէն:
Նա գլուխը շարժելով և ծիծաղելով համաձայ-
նութեան նշան տուց:

—Գառորդ ժամ հանդիստ՝ նստիր և ես քեզ
քսան կօպէկ կը տամ, ասեցի ես:

Նա նայում էր շէպի ցած:

—Քսան կօպէկ կը տամ, կընեցի նորից:

—Շէրթի տաքանից արաղի՝ (մի բաժակ էլ
օղի) վերջապէս պատասխանեց նա:

Այս պատասխանին յաջորդեց երիտասարդների
կողմից բարձրաձայն ծիծաղ: Մի բաժակ օղի խ-
կոյն և եթ խմացրի և խոտաւացայ մի բաժակ էլ
տալ նկարելուց յետոյ:

Մալապատիկ նստեց և ամբողջ քառորդ ժամ
արձանի նման անշարժ մնաց: Երիտասարդները
մօտս հաւաքված, անհամբեր սպասում էին վեր-
ջացնելուն: Նրանք լուռ էին, միայն երբեմն, եր-
բեմն փրթկացնում էին, տեսնելով նմանութեան
նշանները:

Նկարն աւարտվեց, փիտոն իր քսան կօպէկ
մի բաժակ օղին ստացաւ, յետոյ երիտասարդնե-

րին առատ յիշոցներ ուղարկելով՝ գնաց, անհե-
տացաւ...

Միւս առաւօտը վաղ՝ անկողնիս մէջ լսում էի
փողոցից դժգոհութեան ձայներ, սպառնալիք, յի-
շոցներ և վերջապէս մեր քնակարանի դրան թըխ-
թխուցը: Հիւրընկալ բարեկամս գուրս դնաց տե-
ղեկանալով թէ ով է, կամ ինչ է ուղղում Նա
վերադարձաւ ծիծաղելուց թուրացած. մի քանի
անգամ փորձեց պատմել, բայց իւրաքանչիւր
անգամ ձայնը խեղդվում էր կոկորդի մէջ:

—Ինչ է պատահել, դուրը ծեծողն ով էր,
զարմացած հարցնում էի ես:

Յիշոցները շարունակվում էին և ես ճանաչեցի
փիտոյի ձայնը:

Գաղտնիքը պարզեց: Երիտասարդները փիտո-
յին հաւատարմեղ էին, որ իբր թէ ես նկարեցի
նրա պատկերը, իշխանութեան ներկայացնելու
նպատակով: Իշխանութիւնը եթէ կը հաւանի,
անմիջապէս փիտոյին սօղաւտ կը տանեն, եթէ
չի հաւանի, հրացան կարճակեն պատկերի վրա
և փիտոն այստեղ կը մեռնի:

Ուրեմն դժուար չէ հասկանալ, որ յիշոցները
իմ հասցէին էին ուղղած: Հազիւ հազ ինձ աղո-
վեց համոզել փիտոյին, որ երիտասարդները հա-
նաք են անում...

Նոյն երեկոյեան նստած ծանօթներին հետ
թէյ էինք խմում, երբ նախագործարանի մշակ-
ներից բաղկացած ահալին խումբը եկաւ և
կանգնեց մեր սենեակի բաց դրան առջև: Երե-
ւում էր, որ նոր էին դուրս եկել գործարանից,
որովհետև զլիւից մինչև ոտները սևացած էին:
Նրանց մէջ կային հայ, վրացի և մասամբ ռուս
մշակներ:

—Ինչ էք ուղղում, հարցրի ես:

Իմ հարցին յաջորդեց բարեկամս խառնակու-
թիւն: Ամենքն սկսեցին միասին խօսել, ցուցա-
մատները դարձնելով մշակներից մէկին: Երբ
ես խնդրեցի, որ նրանցից միայն մէկը խօսի,
նրանցից մէկը առաջ եկաւ, բեխերը ուղղեց և
սկսեց.

—Այս աղան մի շաբաթ առաջ քսան մանէթ
կորցրեց, գողացան, բայց չը գտնեց ով է գո-
ղացել: Հիմա մենք խնդրում ենք քեզ, որ կա-
րաւարդին բացանես ու իմանաս թէ մեր
միջից գողացողը որն է: Ես մնացի շուտաւա-
ժանօթներս նոյնպէս լարեցին իրանց ուշադրու-
թիւնը:

—Ես չեմ կարաւարդին բացանալ, պատասխա-
նեցի:

—Որեմն ով է:

—Չը գիտեմ:

—Գիտեմք որ դու ես, փող ենք տալիս, ձրի

սեանի և Շիրվանզադէի մէջ դուռն ևս մնացած է ազնուութեան նշոյլ, թող ստախոսութեան այդ երկու հերոսները բարեհաճեն զայլ «Մշակի» խմբագրատունը, որը ամեն օր բաց է առաւօտեան 10 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ, և իրանց աչքերով կարողան հանդուցեալի ձեռագիրը, որը գրված է խմբագրի գրասեղանի վրայ:

Գեորգեան ճեմարանի առողջապահական դրութեան մասին ԷՅՄԻԱՆՆԻՑ մեզ գրում են. «Գեորգեան ճեմարանի մէջ տիրապետող առողջապահական պայմանները շատ վատ են: Մի կողմից սենեակները փոքրութիւնը, իսկ միւս կողմից ճեմարանի և ննջարանի մէջ տիրապետող կարգ ու կանոնները, որոնք չեն համապատասխանում դպրոցական առողջապահութեան գլխաւոր պայմաններին անգամ, շատ աւելիք ներգործութիւն են անում աշակերտների առողջութեան վրայ, որոնց մէջ մեծ տոկոս են կազմում հիւանդները: Պէտք է նկատել և այն, որ աշակերտների կերակուրն էլ բաւարար չէ կարող համարվել: Առհասարակ ճեմարանի առողջապահական մասը մեծ փոփոխութեան է կարօտ»:

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Մեզ մօտ ձիւն գալուն պէս, սահաւանները սկսում են փողոցներում իրանց կատաղի գնացքը: Ամսիս 13-ին մի կին, իսկ 14-ին մի երիտասարդ աստիկ շնամկնացան սահաւանների տակ ընկնելով: Երկուսն էլ սաստիկ վէրքեր ստացան և անյուսալի դրութեան մէջ են: Մեր կարծիքով պոլիցիայի պարտաւորութիւնը կը լինէր խափա արգելել փողոցներում սահաւանների կատաղի քնելը»:

Ինչպէս մեզ գրում են, բամբակ առնող ֆիրմաները ԵՐԵՒԱՆԻՍՏ, չը բաւականապէս օր այս տարի ամեն ջանք են թափում բամբակի գինը վայր գցելու, մի և նոյն ժամանակ մեծ նեղութիւններ են տալիս բամբակ ծախողներին: Բամբակը մանրակերտ կերպով շուկայում, շատ անգամ արդէն վերցրածը ծախողին յետ տալով և անդադար կտորելով այդ բեքեր գինը ամբողջ նահանգում:

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են յունվարի 26-ից հետեւալը. «Այսօր, կէսօրին, տեղիս ամենեւեց յարգված մի անձնաւորութիւն, պ. Զ., խանչալով երկու մահացու վէրքեր հասցրեց Տ. Ղ-ին: Ասում են, որ այդ եղեւնագործութեան շարժաւթը ընտանեկան յարաբերութիւններ և պատճի հարցն է»:

ԱՍՍԻՍԲԱՄԻՑ մեզ գրում են. «Ինչպէս ձեռ յայտնի է, նորերում քաղաքային կուրը է բացվել Ասիաբաղում: Այդուհի, որպէս հասարակաց օգտաւէտ կամ վնասակար հիմնարկութեան մասին խօսելը՝ իմ նպատակիցս դուրս լինելով, թողնում եմ ընթերցողին այդ մասին իր անձնական կարծիքն ունենալու: Միայն այսքան կասեմ, որ չարամտութեամբ տարածված այն լուրը,

իստ չենք ուղղում: Ախար երկու օր է մենք տեսնում ենք, որ չըջում են ամբողջ պիղը և որտեղ էլ նստում են, ժողովուրդը հաւաքվում է, դուռն էլ նրանց համար կարբաղանիս ևս բաց անում: Բարեկամներըս մէկը հասկանալով բանի էութիւնը, իսկոյն վազեց, բերեց էտիւդարանս, բաց արեւ և ցոյց տալով նրանց գոյնգոյն ներկեր, հարցրեց. «Որ գոյնի վրա էք ուղում որ սա բաց անեք»:

— Իրա կամքն է, մենք քնչ գիտենք, պատասխանեցին ամենքը միասին:

Նրանց միամտութեան վրա բաւական ծիծաղելուց յետոյ բացատրեցին, որ եւ կարբաղանիս բացանող չեմ, այլ նկարիչ... Եւ նրանք հաղիւ հասկանալով հեռացան:

Անանայ լինը, որի մասին շատ էի լսել, վճռել էի անպատճառ տեսնել և որքան կարելի է շուտ: Շնորհիւ վրաստանի և Գաղստանի դանադան տեղեր, բաւականաչափ նիւթեր հաւաքեցի և վերջապէս ճանապարհ ընկայ դէպի Անանայ լինը:

Աղտառափայլ սկսած բնութիւնը շատ գեղեցիկ է, Գիլիշանի ձորը հիացրեց ինձ: Կովկասեան սարերի ճանապարհը, որը սովորաբար նմանեցնում են յիշեալ ձորին, նոյնպէս հիւսնալի է, բայց եւ մի առանձին նմանութիւն չեմ գտնում այդ երկու գեղապարկան տեսարանների մէջ: Նրկուսն էլ

իրը թէ կուր հիմնելու նախաձեռնութիւնը պատկանում է տեղիս հայերին և որ իբր թէ հայերը, և այն էլ դարբաղցիք են կազմում այդ հաստատութեան անդամների մեծամասնութիւնը, հիմնովին սխալ է: Անդամների մեծամասնութիւնը բաղկացած է տեղիս ռուս և գերմանացի ինտելիգենցիային պատկանողներից, թէև կան և հայեր անդամների թուակ:

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Մեր երկուսն ուսումնարանները Ս. Յովհաննէս մայր-եկեղեցուն են պատկանում, և այդ եկեղեցուց, կամ լաւ է ասել այդ եկեղեցու երեցիփոխ, պ. Սահականցից են կախված: Իսկ պարոնը մերժում է այդ զբաղումներին տալ 1,500 ռուբլու օժանդակութիւնը, որը թէ ժողովրդի օրագրութեամբ որոշված է յօգուտ առաջնորդի տնօրինութեամբ որոշված է յօգուտ յիշեալ ուսումնարանների: Նորերում, մեծ անբաւականութիւններից յետոյ, հոգաբարձութիւնը վերջապէս կարողացաւ առնել պ. երեցիփոխից ուսումնարանին յատկացրած այդ գումարից միայն 500 ռուբլին, իսկ մնացած 1,000 ռուբլի գումարը մինչև այժմ չէ կարողանում ստանալ: Ինչ ասել կուզէ, որ եթէ ուսումնարանները կարողանային ձեռք բերել և այդ վերջին գումարը, նրանք չէին գտնուի այժմեան նիւթական նեղ և անտանելի դրութեան մէջ»:

«Իլէրիա» լրագրին ԹԵԼԱՒԻՑ գրում են, որ յունվարի 14-ին, ճիշդ Ս. Նուսէի տոնի օրը, այդտեղի Ս. Նուսէի օրհորդաց դպրոցի 11—12 տարեկան զինգրծիկ աշակերտներին մէկը, իշխանուհի Ս. դպրոցի վերին յարկի լուսամտից իրան գցեց ցած: Բարեբաղդաբար ձիւնի վրէպ ընկնելով, մանուկը չը վախճանվեց, բայց խիստ վարդիկ նրա մի ոտը կտորվեց և վիզը ծռվեց, բժշկիկները ասելով թէ և երկուսն առտու ջանայ էլ, այնու ամենայնիւ նրա ոտը կապ կը մնայ և վիզը ծռու: Այդ մանկական անձնատուրութեան փորձի շարժաւթները գանազան կերպով են բացատրում. ոմանք ասում են, թէ աղջիկը չէր ուղում սովորել, մանաւանդ նա հրաժարվում էր գիշերները դպրոցում քնել և իսկ այդ պատճառով դիմեց անձնապատկեան: Առաւօտեան թուր լոյսը չը բացված, իր ընկերներին քնած դնելով, բացեց դռնատան լուսամուտը, նստարանի վրա բարձրանալով և իրան նետեց պատուհանից, ասելով «այ թէ չէք թողնի ինձ այստեղից»: Իսկ օմանք էլ ասում են թէ երեխայի վայր ընկնելը՝ անզգուշութիւնիցն էր, երբ առաւօտը բացել էին լուսամուտը, մանուկը բարձրացաւ լուսամուտի վրա որ մի թռչուն բռնի, բայց յանկարծ ոտը դուրս ընկաւ և դժբաղդը ցած գլորվեց:

ՀԻՆ-ՆԱԽԻՋՆԻՍԻՑ մեզ գրում են. «Այս ձը մեռը մենք երկուր ժամանակ կարօտ էինք մնացել ձիւնի: Անցեալ տարվայ դեկտեմբերի 4-ին մի թիւթ և ձիւն եկաւ, և ինչ ուրախութեամբ ողջունեցինք, սակայն շուտով անհետացաւ ձմեռվայ այդ աւետաբեր ձիւնը և այնուհետև շարունակ-

ված են, երկուսն էլ դուռն ևս կուսական դրութեան մէջ են, ինժեներները յանդուգն ձեռքը դնել են չէ ասելով նրանց կուսութիւնը, ինչպէս ասելու է Շվեյցարիայի անմասն բնութիւնը:

Կովկասեան սարերի ճանապարհը համեմատում եմ գեղեցիկ, առողջապաղմ և յարթանդամ լեռներ, որի հայեացքը և գրաւիչ է և սարսափեցնող, իսկ Գիլիշանի ձորը նման է գիւղական խրճիթում ծնված և կուսական անտառների մէջ մեծացած մտադաշտ գեղեցկուհուն, որի կրակոտ աչքերը արտայայտում են անվեհուցութիւն, բնական պարզութիւն և անմեղութիւն: Սակայն այդ երկու հրաշալիքների մասին կը խօսեմ միւս անգամ, Անանայ լինը տեսնելուց յետոյ:

Սնանայ լինը փռված է առաջու Անանայ երկուր է, մոլթը նոր է ընկել: Արեւմտեան կողմը, հորիզոնի մօտ երկնքի վրա դեռ ևս երևում են վերջալոյսի թոյլ, կարմրադոյն հետքերը: Շուրջ մօտայ է և անշարժ: Լինը, ծովի կերպարանքով ննջում է Մուգ-կապոյտ երկնքը, որի խակաւն գոյնը կարելի չէ արտայայտել բառերով, ճշդութեամբ անդրադարձել է ջրի մէջ: Ծովակը այս րօպէլիս ներկայացնում է մի ահալին հայելի և այս անձեռագործ հայելիի մէջ երկնքն իր մի ջանքի հատիկ լսաշօր աստղերով և մերկ, բուսականութիւնից զուրկ բլուրներն ու ապառաժները

վեցան տաք եղանակները: Մինչև յունվարի 13-ը Ռեմբուրի ջերմաչափը ցոյց էր տալիս 8—11 աստիճան տարբութեան: Դառերը նորից սկսեցին արթնանալ իրանց ձմեռնային ընդի: Միայն յունվարի 13-ից ձիւնը նորից սկսեց գալ և սպիտակ փռոցով ծածկեց մեր դաշտերը»:

Մեզ գրում են, որ ՀԻՆ-ՆԱԽԻՋՆԻՍԻՑ շրջակայ գիւղերում տիրում են մանուկների մէջ այլ և այլ տարախիտիկ հիւանդութիւններ, թէև մասնական դէպքեր սակաւ են պատահում:

Մեզ խնդրում են տալ հետեւեալ նկատողութիւնը: «Թիֆլիսի ծխախոտի գործարաններից մինում տիրում են հետեւեալ կարգերը. գործարանը, որը ունի հարիւր բանօրից աւելի, աշխատեցնում է բանւորներին ամբողջ օրը և գործարանի վարչութիւնը չէ թողնում որ բանուրը մի րօպէ անգամ գործարանից դուրս ոտը դնի: Այն ժամանակ միայն բանւորին թոյլ է տրվում դուրս գնալ գործարանից, երբ որ նա հիւանդացել է: Բանւորներին չեն էլ թողնում որ կէսօրին դուրս գնան ճաշելու, այլ գործարանի վարչութիւնը ինքն ճաշ է պատրաստել տալիս բանւորներին համար, որը և վաճառվում է նրանց վրա կըրկ-նապատիկ գնով: Բացի դրանից ամեն մի բանւորի ամսական վարձից՝ ռուբլուց 1 կօպէկ պահում է վարչութիւնը, իբր թէ բանւորների համար խնայողական արկղ կազմելու և գումարը բանւորի սե օրվայ համար պահելու նպատակով: Սակայն ոչ դժբաղդ դէպքերում, ոչ էլ բանւորի մեռնելու ժամանակ նրա ընտանիքը դեռ ոչ մի անգամ այդ գործարանի խնայողական ասված արկղից ոչ մի կօպէկ երբէք չէ ստացած»:

ՄԵՐՎԻՑ մեզ գրում են, որ այս տարի շատ ձիւնի պատճառով, երկուր են կրում, որ գարնան սկզբներում Ամու-Գարիայի և մինչև իսկ Մուրկա-րի ջրերը կը յորդանան և կորողեն չըջնալները, որ թէ բնակչութիւններ կան և թէ այգիները Նամակագիր այն միտքն է յայտնում, որ պէտք է առաջուց մտածել այդ հաւանական վտանգից ազատ մնալու համար:

Մեզ հաղորդում են, որ Պետերբուրգի հրէաների հասարակութիւնը իր կողմից ներկայացուցիչ է նշանակել Լորիս-Մելիքովի թաղմանը ներկայ լինելու համար այստեղի հրէաների նախկին բարերի պ. Լէվինին, որը և պիտի գնէ հանդուցեալի դաբաղի վրա հրէաների կողմից մի թանգաղին պատկ:

ԱՍՍԻՍԲԱՄԻՑ մեզ գրում են որ ցորենը այդտեղ շատ առատ է և անցեալ ամսի վերջին օրերում հայ վաճառականները ցորենի մեծ քանակութիւն բերեցին Պարսկաստանից, այնպէս որ Ասիաբաղում ցորենի պղծը արժէ այժմ 70 կօպէկ, ցորենի ալիւրի պղծը 1 ռուբլի, իսկ գահրու ալիւրը՝ 55 կօպէկ պղծը:

ՕԳԵՍՏՈՑ մեզ գրում են, որ շուտով գալու

տեսնում են իրանց դէմքերը: Կղզին, հայ հոգևորականութեան այս հիմնաւորը աքսորատեղին իր խորհրդաւոր կերպարանքով դուրս է ցցվել ծովի յատակի միջից և պառկել ջրի մակերևութի վրա, ինքն իրով պահելով իր ունեղի վրա հայկական հին ճարտարապետութեան յիշատակները: Երկրից անջատված, ջրերով շրջապատված մօտայ հսկան մեծ տպաւորութիւն է գործում մարդու վրա: Յամաքաբերդ հայ գիւղը հողով ծածկված, գետնախոր տնակներով և եգիպտական բրդաձև ավառների կոյտերով բազմած է ծովակի ափին և դիտում է կղզին: Ամեն տեղ տիրում է անդորրութիւն, միայն երեւնի լուրում է գիւղի կողմից պառաւ շան անախորժ հաչոցը և երբեմն էլ հասնում է ականջին ամենախաղաղ կերպով զանդակների աննեղաշնակ բուրձ ձայնը. երևի ուղտի քարաւան է գալիս:

Կանգնած եմ ծովափնեայ բարձրաւանդակի վրա և անհամբերութեամբ սպասում եմ, լուսնի ծագելուն: Այն, լուսնի ծագելուն, բնութեան հրաշալիքների մէջ իմ ամենաաւելի վայրկեանին, որը շատ անգամ փարատել է սրտիս թախիծը: Լինը երեք կողմից շրջապատված քարափներով, պատասխան է չորրորդ կողմը և փռվել է աչքով անհասանելի տարածութեան վրա, ուր աղօտ կերպով նշարվում են լեռների փիւքերը, որոնց շարունակութիւնը կորչում է ջրի, երկնքի և երե-

նի թիֆլիսի մի երիտասարդ տաղանդաւոր վիճօն. չլիստ, պ. Ադամովիկի, որը դեկտեմբեր ամսին մի երկու կօնցերտ առեց Օդէսայում և ահապիս աջողութիւն ունեցաւ այդտեղ: Օդէսայի հասարակութիւնը կատարեալապէս ոգևորված, յախշտակված էր Պ. Ադամովիկու վիճօնչլի վրա անելուց: Օդէսայի մամուլն էլ ոգևորութեամբ է վերաբերվում երիտասարդ երաժշտի արտակարգ տաղանդին:

ԱՐԳԻՆԱՑԻՑ մեզ գրում են. «Վերջին ժամանակները Շիրակում մի վատ սովորութիւն է մըտել, այն է անպատասաւ տղաներին ամուսնացնել հասակ առած աղջիկներին հետ: Ուշադրութիւն ենք դարձնում այդ վտանգաւոր սովորութեան վրա հոգևոր իշխանութեան ուշադրութիւնը»:

Տեղական ռուս լրագրիները լսել են, որ Փրբանսիացի անտրըպէնտեր, պ. Լասալ արդէն համաձայնութիւն է կայացրել Թիֆլիսի քաղաքային թատրոնի վարչութեան հետ և մեծ-պատի կերպով շաբաթից կը սկսվեն այդ թատրոնում պ. Լասալի Փրանսիական օպերետային խմբի ներկայացումները: Բացի օպերետային թատրոնի սիական խումբը կը ներկայացնի Փրանսիական վոդվիլներ և մինչև անգամ մի քանի գրամաներ խումբը, որի մասին թատրոնական վարչութիւնը շատ նպաստաւոր տեղեկութիւններ է ստացել Ալէքսի Գրանսիական հիւպատոսից, Ալէքսից գալու է մեր քաղաքը մեծ-պատի առաջին շաբաթը:

Կոմս Լորիս-Մելիքովի թաղումը ներկայ շաբաթվայ ընթացքում չի կայանայ, քանի որ հանգուցեալ կոմսի ամուսինն ու ընտանիքը այս շաբաթ դեռ ևս չեն հասնի Թիֆլիս:

Կովկասեան սարերի գլխաւոր շղթայի ճանապարհները, եկած ձիւնների պատճառով՝ անանցնելի են դարձել, այնպէս որ երկու օր շարունակ մենք Ռուսաստանի փոստը չէինք ստանում:

Մեզ ուղարկված է հետեւեալ նկատողութիւնը. «Ջարմանայի է մեր քաղաքի բժշկների վաղու ու բարբը»: Երբ մի հիւանդի մօտ կանչվում են մի քանի բժիշկներ միմեանց հետից, լուրջանչլուրը դրանցից կարծեք իր պարտքն է համարում ամենից առաջ բամբակ միւս բժիշկներին, յայտնել որ նա հիւանդին օգնել չէ կարող, և վերջապէս պատուել և դէն գցել նրա դրած դեղատոմսը: Սովորական բան է դարձել հիւանդի անկողնի մօտ տեսնել բժիշկների, գիտութեան ներկայացուցիչների աններելի վիճարկութիւնները և կըրտտ կուխները: Մի կողմ թողնելով այն, որ այդ չը անվայել բան է ընդհանրապէս, էլ կարելի չը նկատել, որ այդ սովորութիւնը խախտում է հիւանդի հաւատը գէպի բժիշկը. հիւանդը կասկածով է սկսում վերաբերվել դէպի բժիշկի տուած դեղը և գիտութիւնը: Գրա մէջ համոզված պիտի լինեն իրանք բժիշկները, ուրեմն թող համոզվեն

կոյեան մշուշի մէջ...

Վերջապէս հեռքը այլ ևս չը կայ: Երկնքն ու երկիրն աստիճանաբար խաւարում են, իսկ աստղերը քաղմանում են և պայծառանում: Նըրանցից շատերը ժպտում են, շարժվում են և ֆօսֆօրի փայլ են արձակում իրանց միջից, իսկ միւսները անշարժ, համբերութեամբ նայում են դէտի ցած, մեղքերով լի երկրի վրա: Ջանգալների միահնչուն, մեղամաղձոտ ձայնը՝ փոքր առ փոքր մօտենում է, լսվում է նոյնպէս ուղտապանի երգի ազդու ձայնը, արևելեան գգպուռն եղանակը՝ բայաթին: Գիւղի տնակների մէջ, մէկը միւսի հետից յայտնվում են գիւղական անպաճոյճ ձըրապները և սղարը որոշելով փոքրիկ պատուհանների ձեները հողին ճառագայթում են դուրս: Ահա կղզիի վրա նոյնպէս երևեցաւ մի ճրագ, նա տատանվում է, հանգում է, նորից վառվում է, պայծառանում է, նուալվում է և վերջապէս բոլորովին անյայտանում: Տափարակ գաղթով բլուրի ետեւ երկնքը փոքր ինչ շաւազունվում է:

Վերջապէս մօտեցել է լուսնի ծագումն: Ուրախալի միտքն է անցնում գլխովս: Երկնքը շաւազունվում է, ամպի մի քանի կտորները ներկվում են կարմրախաւառնուղ դեղին գոյներով: Նրանք անփոփոխ անդադաւառնում են անշարժ ջրի մէջ: Երկնքն էլ, որի երեսը շարունակ ծածկ-

և այն բանի մէջ, որ պէտք է վերջ տալ այդ տեղի սովորութեան»:

Երկրորդ երկրի շահաման, որը վերջերս մեր Պետերբուրգում իր վրա ունեցողութիւն դարձրեց, ինչպէս մեզ դուրս են բաղադրեց, չուտով պէտք է Բագու գալ, և այդտեղ մի առ ժամանակ մնալուց և Կարա-Մուրադայի հետ մի երկու կոնցերտ տալուց յետոյ, պիտի ուղևորվի Խաղալի, կատարելագործվելու համար:

ԲԱՂԱՅԻՑ մեզ գրում են. «Մի խումբ թատերախմբի պատրաստութեամբ են փետրվարի 7-ին ներկայացում տալու և պարահանդէս կազմելու յօգուտ Բագուի բնակչության և ծխական դպրոցների աղքատ աշակերտներին»:

Յունվարի 29-ին, կիրակի օրը, Թիֆլիսի քաղաքային Արհեստաւորաց դպրոցի դահլիճում կատարվեց նոյն դպրոցի տարեկան հաշվետուութեան և մրցանակաբաշխութեան հանդէսը Գրգորով պատշաճաւոր կերպով զարդարված էր և զարդերի դաստներով մէկտեղ հանդէս էին զբոսաւորները և անհատները իրենց հետեւեցողներով: Մասնաւորապէս շատ քանակութեամբ էին ներկայացողները: Հանդիսին ներկայ էին Կովկասեան ռուսահայրենի շրջանի հոգաբարձուն, քաղաքագլխի պաշտօնակատարը, ձայնաւորները և բաղձաթիւ հասարակութիւն: Ուղիղ ժամը 12-ին սկսվեց հաշվետուութեան ընթացումը, որից քաղաքում ենք մի քանի հետաքրքիր տեղեկութիւններ: Թիֆլիսի քաղաքային Արհեստաւորաց դպրոցը իր հիմնելու օրից (դպրոցը հիմնվել է 1880 թ.) այս չորրորդ անգամն է, որ տալիս է աւարտող աշակերտներ: Անցելով 1888 թ.ին աւարտող են դարձել ուսման ընթացքը 29 աշակերտներ, իսկ դպրոցի բացման օրից դպրոցը տուել է 80 հոգի աւարտող աշակերտներ: Խրանց ուսման ընթացքը այս տարի աւարտող 29 աշակերտներից ուսանող 4 են, վրացիք—10, հայեր—13, հրէայ—1 և եւրոպացի 1 հոգի: Գրգորով իր հիմնելու օրից տուել է հասարակութեանը 52 փակաւարձներ և 1 ձուլիչ: Այս տարի դպրոցում ուսանում են 205 աշակերտներ, որոնցից առանհեր 51 են, վրացիք—67, հայեր—81 և եւրոպացիք—6: Հաշվետուութեանց յետոյ կատարվեց վկայականների և պարգևների բաժանումը, որից յետոյ դպրոցի ուղղափառ կրօնաւորացի մի քանի խրատական խօսքեր ասեց աշակերտներին, որով և վերջացաւ հանդէսը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

Անգլիայում տեղական ինքնավարութեան լայնացումը, որի մասին այս օրերս առիթ ունենացանք խօսելու, և իրականացում տեղի ունեցող

ված է սե քօղով ինձ նման սպասում է լուսինն, գիշերային իր պահապանին:

Եւ շարունակ նայում եմ երկնքի շառագունված մասին, որը փոքր առ փոքր ընդարձակվում է երկնակամարի վրա և ամօթխած լուսնի մերձեւնայն է գուշակում աշխարհին: Բլուրներով մինչ այս միջոցին հարաւուրն է ինձ թուում, գաղաթի վրա կրակ է նշմարվում, նա մեծանում է, աճում է, բարձրանում է և իր կրակոտ, բայց համեստ դէմքը ամբողջապէս դարձնում է դէպի երկիր և գիշերային ողջոյն է ուղարկում: Նայում է իր շուրջը, և ամեն տեղ աղտոտ լոյս է արձակում, նայում է դէպի վայր, և իր դէմքն է տեսնում: Շարունակում է բարձրանալ, բայց նկատելով որ աշխարհի շնչաւոր և անշունչ բոլոր էակները դէպի իրան են դարձնել հայացքները, մօտենում է երկնային քօղին և դեռահաս պարկեշտ կոյսի նման ծածկվում է նրա տակը մի րօպէ, սակայն հետաքրքրութեանից զրոյթած, երբեմն երբեմն բարձրացնում է իր բոլորակ դէմքից քօղի մի անկիւնը, նայում է վայր, դարձեալ տեսնում է անհեռադորձ հայելիի մէջ իր երեսը և արագութեամբ նորից մտնում է քօղի տակ: Այս միջոցին միտս է ընկնում վշտահար բանաստեղծի խօսքերը:

Թաղմուտի, ով լուսին, միման սիրահար Գէմը սե քօղով թող ծածկեն ամպեր

նոր շարժումները և դժգոհութիւնները առիթ են տալիս մի փոքր կանգ առնելու անգլիական այժմեան պահպանողական միջնատրոսթեան վրա, որի դեկլարացի, ինչպէս յայտնի է, մարկիզ Սալըսթընն է:

Յայտնի է, որ Սալըսթըն պահպանողական (կոնսերւատիւ) բանակի ներկայացուցիչ է, և երբ մի քանի ժամանակ առաջ Մեծ-Բրիտանիայի կառավարութեան ղեկը գտնվում էր Գաղափարի ձեռքում, այսինքն երբ միջնատրոսթեան գլխին կանգնած էր ազատամիտ բանակի յարգելի ներկայացուցիչը, Սալըսթըն իր կուսակիցներով կուսում էին Գաղափարի լուրը նախագծերի և բեֆօրմների դէմ: Նրանք դէմ էին տեղական ինքնավարութեան լայնացնելուն, որի համար այնքան եռանդուն կերպով աշխատում էր Գաղափարի կուսակիցներով: Նրանք դէմ էին իրականացնելու ինքնավարութեան գաղափարին, վերջապէս նրանք դէմ էին Գաղափարի կուսակցութեան խաղաղ քաղաքականութեանը արտաքին հարցերում...:

Հանգամանքները այնպէս դասաւորվեցան, որ Գաղափարի սովորվեց հեռանալ միջնատրոսթեան դասի պաշտօնից, և իրեն մի մասնաւոր մարդ, ճանապարհորդում է Եւրոպայում: Սակայն ճանապարհորդելով Անգլիայի սահմաններից դուրս, դառաւ ազատ քաղաքագէտը մեծ ուղարկութեամբ դիտում է այն գործերը, որոնք տեղի են աւելնում իր հայրենիքի մէջ՝ այժմեան պահպանողական միջնատրոսթեան օրով:

Եւ ամբողջ աշխարհը Գաղափարի հետ մի գործնական երկօրեայ աշխատանք է այժմ,—Սալըսթընի միջնատրոսթեան փոքր առ փոքր իրաւորում է այն նախագծերը, որոնք Գաղափարի ազատամիտ կուսակցութեանն են պատկանում, գլխաւորապէս տեղական, ներքին հարցերի վերաբերմամբ: Կամ ուրիշ կերպով ասած, Սալըսթընի պահպանողական միջնատրոսթեանը ներքին հարցերում գնում է ազատամիտ միջնատրոսթեան նախագծած ճանապարհով:

Դա, ի հարկէ, ուրախելի երևոյթ է, և այդ բանը մեծ ուրախութիւն կը պատճառի իրան Գաղափարին:

Սակայն հետաքրքրական է այստեղ մի ուրիշ հարց: Ինչ կը նշանակէ Սալըսթընի միջնատրոսթեան այդ ընթացքը, և ինչ միտք ունի պահպանողական միջնատրոսթեան այդ ազատամիտ ձգտումը:

Ուղարկութեամբ հետեւելով Անգլիայի կառավարութեան այժմեան քաղաքական թէ ներքին և թէ արտաքին հանգամանքներին, կարելի է ասել, որ այդ երկօրեայ Սալըսթընի միջնատրոսթեան կողմից մի tour է, որը նպատակ ունի:

Այժմեան միջնատրոսթեանը շատ լաւ դուրս է, որ իր կողմը պիտի ունենայ ժողովրդի համակրութիւնը իր ամենալավատր նախագծերը անկողնից պաշտպանելու համար: Հէնց այս րօպէս Անգլիայում շատ մեծ է նրանց թիւը, որոնք դժգոհ են կառավարութեան արտաքին քաղաքականութեանից, իսկ իրանդիայում երեան եկող նոր դժգոհութիւնները մի շատ մեծ գլխաց ա-

ւանք են սպասում Սալըսթընի կարիքներին: Իրանդական ինքնավարութեան գործը ճնշելու համար, որը Սալըսթընի միջնատրոսթեանն ահա՜ չանքն է, այդ միջնատրոսթեանը հարկաւոր է ժողովրդի համակրանքը և համարաշխարհիւնը: Անգլիական ժողովուրդը երկուստեք է բաժանվում իրանդական հարցի վերաբերմամբ:—մի մասը համակրողներ, միւս մասը հակակրողներ են: Այդ երկու մասն էլ միանում և հակասում են միջնատրոսթեանը, երբ դա ներքին և արտաքին քաղաքականութեան հարցերում աշխարհիւն չէ գտնում, կամ երբ այդ հարցերում նա չէ համապատասխանում ժողովրդի արտապրութեանը:

Եւ ահա Սալըսթընի միջնատրոսթեանը վճռել է մի գիշու անել, միւս հարցերում իրան պաշտպանած լինելու համար:—միջնատրոսթեանը ներքին ինքնավարութեան հարցում զիջում է անուամբ, գործադրում է ազատամիտ կուսակցութեան պրօպագանդ, որպէս զի իրանդական հարցի վերաբերմամբ անգլիական ազգի աշխարհիւնն ունենայ, կարողանայ խեղդել այդ երկրի անկախութեան խնդիրը, և կարող լինի պահպանել իր ձեռքում երկրի կառավարութեան ղեկը:

Այդ մի քողաքական խորամանկութիւն է,—բայց թէ որքան պատաւար է մի որոշ ուղղութիւն ունեցող միջնատրոսթեան համար,—բացատրութեան կարօտ չէ...

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ինչպէս «Արեւել» լրագիրը արդէն ծանուցած էր, Կ. Պոլսի հայոց խառն ժողովը որոշած էր պատրիարքարանի վերաշինութեան ձեռնամուկ լինելու՝ չէնքի հնութեան և անբաւականութեան պատճառով: Պատրիարքին յանձնված էր յանձնաժողով կազմել, չինութեան գործը պիտի բերելու համար Այժմ կարգում ենք նոյն լրագրում, որ Քաղաքական ժողովը, պատրիարքի հետ խորհրդակցութեամբ և նրա նախագահութեամբ յանձնաժողով կազմեց, որի անդամներն են հետեւեալ անձինքը. պ. պ. Արիկ Ունեհան, Յովհաննէս Նուրեան, Սեւակ Մաքսուտ, Յովհաննէս Աշխուրեան, Յովհաննէս Լապտան, Յարութիւն Նորատունկեան և Ներսէս Ներսէսեան:

—Վիեննայից հեռագրում են, որ Բուդաօք իշխանի դիակը քննող անձինք իրանց արձանագրութեան մէջ հաստատապէս ասում են, որ իշխանը ինքն է իր վրա արձանակ արձակել: Թէ ինչ է ինքնասպանութեան պատճառը, ի հարկէ, այդ մասին ոչինչ չէ ասված այդ արձանագրութեան մէջ, և առհասարակ այդ հետաքրքրական կէտի մասին նոյն իսկ Վիեննայում շատ տեսակ կարծիքներ են յայտնվում, և վերջնականապէս ոչինչ չէ յայտարարված:

—Երցիկներից Բուդաօք մեռնելով, թողել է մի քանի նամակներ՝ մէկը կայսրի, միւսը կայսրուհու, երրորդը իր կնոջ և չորրորդը Երցիկներից Օտտոնի անունով: Այդ նամակների բովանդակութիւնը գաղտնիք է:

—Բերլինից հեռագրում են, որ ընկալաւորին ներկայացվեց մի օրինակով, թագաւորական տան

բիւդեթը 3,500,000 մարկով աւելացնելու համար:

—Ինչպէս երևում է Լոնդոնից եկած տեղեկութիւններից, այնտեղ ահադին տպագրութիւն է թողել «Contemporary Review» հրատարակութեան մէջ լոյս տեսած յօդուածը, որը կրում է «Բիսմարկի տոհմը» վերնագիրը: Եօդուածի մէջ այնպիսի մտքեր են յայտնված, որ եթէ հեղինակը չը յայտնվի, այն դէպքում անկասկած իշխան Բիսմարկի կը կարծի թէ յօդուածի գրելու հետ սերտ կապ ունի այդ կայսրուհու վիկտորիա: Լոնդոնում ենթադրում են, որ այդ բանը կարող է նոր միջնադէպի առիթ տալ կայսրուհու և Բիսմարկի մէջ:

—Գերմանական մի քանի անկախ լրագիրներ այն միտքն են յայտնում, որ Բուլանդէի ընտրութեանը գերմանական կառավարութիւնը մի առանձին նշանակութիւն չը պէտք է տայ, որովհետեւ այդ ընտրութեամբ հանրագոտութիւնը բոլորովին չէ կորցնում իր ոյժը:

ԻՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Արտասահմանեան լրագիրներում կարգում ենք հետեւեալը: Փարիզի «Բանկ դը Ֆրանս» դրամատան վարչութիւնը այս օրերս Կ. Պոլսից նամակ է ստանում, Կոնստնուպոլիսում, որի մէջ նամակագիրը յայտնում է թէ ճանաչում է այն դրամաներին, որոնք 500 ֆրանկանոց կեղծ բանկաւորներ են պատրաստում և պահանջում է 2,000 ֆրանկ վարձատրութեան նշանակաւորներն ու բանկարանը ցոյց տալու համար: «Բանկ դը Ֆրանս» դրամատան վարչութիւնը գուշակելով, որ այս գործի մէջ մի խաբէութիւն կայ, հաղորդում է իրողութիւնը Կ. Պոլսի ֆրանսիական հիւպատոսարանին, որը գործը պարզելու համար յիշեալ նամակի պատասխանը յանձնում է Ղալաթիայի ֆրանսիական փոստատան և մի ուստիկան է կանգնեցնում, որպէս զի դիտել թէ ով կը գալ նամակը ստանալու: Փանի մի օրից յետոյ, մօտ 25 տարեկան մի երիտասարդ ներկայանում է փոստատան, Կորնիլի անունով: Նամակ պահանջելով Ղալաթիայի ֆրանսիական փոստատան և դրաման և դատար (փոստիկան) անմիջապէս հետևում է նրան: Հետեւալ օրը փոստիկանութիւնը խաղաղակամ երիտասարդի բնակարանը, դրաման է նրա բոլոր թղթերը: Յայտնվում է որ կեղծ Կորնիլի մի հայ երիտասարդ է, Սուրեն անունով: Նա խոստովանում է թէ ինքն է նամակի հեղինակը և թէ ուրիշ ընկերներ ունի, մին 20, միւսը 18 տարեկան երիտասարդներ, որոնց նպատակն էր ֆրանսիական բանկից դրամ կործնելու: Արդէն «Բանկ դը Ֆրանս» դրամատան ուղղված նամակի սեղանագրութեանը գործնական երիտասարդի թղթերի մէջ և մի և նոյն ժամանակ գտնվեց մի ուղերձի պատճէն, որ պատանի խաբարները ուղարկել էին գերմանական լրագիրներին, իրանց համակրութիւնը յայտնելով: Փրանսիայի քաղաքայինը: Այժմ յիշեալ Սուրենը բանտարկված է արդէն, իսկ նրա երկու գործակիցները ազատ թողված են նախաւորութեամբ:

Յայտնի գրող Զախէր-Մաջուս, որի մի քանի դրամաները մի քանի տարի առաջ լոյս են տեսել «Մշակ» մէջ, գրել է մի նոր բովանդատու հեանքից, «La sirène» վերնագրով:

Տօրինի. զեղեցիկներին մրցանակաբաշխութեան ժամանակ առաջին պրէմիան ստացել է վիեննայի մի օրիորդ, Ջիննի Կուպեր անունով:

Բաւելի կերպարանքը, ոչ աստղերի ժպիտը և վերջապէս ոչ ալեկոծված ծովի աղաղակը չեն ազդում նրա վրա: Վանքերի գմբէթները խաչակիր գաղաթներով սե զոյններով նկարված են ծովակի լուսաւորված մասի վրա: Լճի գալարացած ալիքները, չը շապատված կղզու չորս կողմը, երբեմն աղբրաւորով զննում են նրա օգնութեան, երբեմն սպառնալիքներ են ուղղում դէպի նա, բայց չար է նրա սիրտը և խելոյն: Եւ մեռած, նա անգիտութեամբ յետ է մղում նրանց: Դառնում են յետ յուսահատված և հանդիպելով ընկերներին, դրեկախաւորում են իրար յետ և ընդհանուր ոյժերով աղաղակ են բարձրացնում, գլուխը գլխի են զարկում և վրիւրը մինչև երկինք բարձրացնում, բայց աւաղ, երկինքն էլ խուլ է և համբ...:

Ահա երեսը ալիքների վրա ասաւազատաւոր նաւակը: Նա կարծես մի և նոյն տեղ տատանվելով, ընկողի կենցաղի նման երկնքի նետվում է դէպի վեր, երբեմն իջնում ցած,—աղբիւրն օր տեղից և օր է գնում:

Քամին շարունակվում է և ծովակի կատաղութիւնը աստաղացնում:

Գրեթե անհայտ է ինձ ընկերական խոսքի մէջ, նա չէ հիացնում, այլ վրդովում է մարդու հոգին...

Գ. Բաշինջաղեան

Օրիորդի լուսանկարները այժմ մոզայի մէջ են գեղեցկութեան բազմաթիւ երկրպագուներին մէջ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԻԷՆՆԱ, 27 յունվարի: Կայսրը և կայսրուհին փետրվարի 11-ին (ն. տ.) կը գնան Պէշտ, ուր ուսանողները պատրաստվում են դիմաւորել նոցա մեծութիւններին սոց շարքով: Այստեղի լրագիրներին հաղորդում են Բերլինից, որ իշխան Բիսմարկի և ազգային-ազատամիտ կուսակցութեան մի մասի, այլ և իշխան Բիսմարկի և կոմս Վելդերգէի յարաբերութիւնները լարվել են:

ՀՈՍՄ, 27 յունվարի: Այսօր, կէսօրից յետոյ, անգործ բանւորները սկսեցին թափառել փողոցներում, զինաւորված լինելով փայտեղի և քանդակարան գործիչներով: Նրանք կոտորում են խանութները պատահանները և փողոցները լապտերները: Այդպիսի անկարգութիւններ տեղի ունեցան և երէկ: Հոսմերտ թագաւորը վճռողապէս պահանջում է կրիստիանի, որ նա բանւորներին պարագլուխը տալու միջոց գտնի:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 28 յունվարի: «С. Пет. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ աւգանական էմիր Աբդուրաման-խանը, հալածելով մեր հողերում ապաստանված խիսակ-խանին, կենտրոնացրել է մեր սահմաններին շատ մօտիկ 20-ից մինչև 30 հազար զօրք, և մինչև իսկ, լուրերին նայելով, հրաւիրել է Բուխարայի էմիրին՝ միասնապէս գործելու Ռուսաստանի դէմ: Այդ հրաւերը անպայման մերժվել է Բուխարայի կողմից, բայց աւգանացիները շարունակում են խմբվել մեր սահմաններին մօտ: Արտաքին գործերի մինիստրութիւնը դարձրել է այդ բանի վրա անգլիական կառավարութեան ուշադրութիւնը, ըստ որում երկու կողմի շահերն էլ պահանջում են թոյլ չը տալ, որ Աբդուրաման անգլիական քայլեր անի, որոնք կարող են անխուսափելի կերպով ստիպել Ռուսաստանին նախադրուշական խիստ միջոցներ ձեռք առնելու: Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրի առաջիկայ ճանապարհորդութեան առիթով, «Новое Время» հաղորդում է, որ մինիստրը գնալու է Ռուսաստանի հարաւային կողմը, ապա կուղևորվի դէպի Վլադիվոկ կողմերը, և ապա Մարիամեան ջրային ճանապարհով կը վերադառնայ Պետերբուրգ: Ֆինանսների մինիստրութեան մէջ վերջնականապէս կազմակերպվեց տարիֆային դէպարտամենտը:

ՄՕՍԿԱ, 28 յունվարի: Այսօր հանդիսարար

կերպով ածուցեց Ա. Ա. Շենշլին (Ֆէտի) գրական գործունէութեան յիսնամեայ յօդակները: Յօդակներին ներկայացրին ուղերձներ՝ ուսաց գրականութեան սիրողներին ընկերութիւնը, Պետերբուրգի գրականագէտները, և Յէսարովիչ Նիկոլայի լիցէօնը, ստացված են բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ: Պատգամաւորները ընդունելութեան ժամանակ նուազեցին այդ օրվայ համար Մայրոշկինի գրած երգը: Բոլոր ներկայ եղողներին յօդակները բաժանեց այդ օրվայ առիթով իր գրած ոտանավորը՝ «Իմ մոզայի յիսնամեակին» վերնագրով:

ՀՈՍՄ, 28 յունվարի: Բոլոր հրապարակներում և փողոցների վրա կանգնած է հեծելազօրք: Քաղաքը յուզված է. խանութները փակված են: «De-Frevi» շատրուանի մօտ կախ ծագեց բանւորների և ոստիկանութեան մէջ: Կորսոյի վրայով երթնելով ինքն զագարեցրած է:

ՓԱՐԻՋ, 30 յունվարի: Պատգամաւորների ժողովում Ֆլոկէ պահանջեց որ առաջնութիւն տրվի չըջանալով ընտրութիւն անելու սխառնային վերականգնման օրինադրի քննադատութեանը, խոստանալով, որ յետոյ կառավարվի օսանմանագրութեան վերաբերման վերաբերեալ նախագիծը: Պատգամաւորների ժողովը 308 ձայններով մեծամասնութեամբ 243-ի դէմ վճռեց, սկսել առաջին օրինադրի քննութիւնը երկուշաբթի, իսկ 504 ձայններով 9-ի դէմ վճռեց, սահմանադրութեան վերաբերման վերաբերեալ օրինադրի քննել հինգշաբթի:

ՀՈՍՄ, 30 յունվարի: Կարգը քաղաքում վերականգնված է: Մօտ 160 մարդիկ կայանաւորված են. հրապարակական ժողովներ արգելված են: Կրիստի յայտնեց պատգամաւորների ժողովում, որ խառնակութիւնների պատճառը խաղաղութեան բարեկամների ընկերութիւններն էին: Գլուխ դէմ բողոքեց սօցիալիստ Կոստա: Հինգշաբթի նշանակված է Բօնգիի առաջարկութիւնը, որի նպատակն է վստահութիւն յայտնել կառավարութեանը և հաւատացնել որ կառավարութիւնը կը կարողանայ առաջն առնել ապագայ խառնակութիւններին:

ՀՈՍՄ, 30 յունվարի: Կարդինալ Լէգոլաօսկու մահուան լուրը հերքվում է: Յայտնվում է, որ մահել է կարդինալ Պետրա:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 30 յունվարի: Նօրքին դրծերի մինիստրի օրոյմամբ «Минута» լրագրի հրատարակութիւնը դադարեցրած է երեք ամսով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՈՍԱ
Յունվարի 27-ին
Լօնդօնի վրա 10 ֆունտ արծիւ. . . 93. ր. 90

Համարագրի վրա 100 մարկ —	46	—	—
Փարիզի վրա 100 ֆրանկ —	37	—	—
Ռաբի — արծիւ —	7	51	—
Մարաշի կուպօններ —	150	50	—
Արծաթ —	1	13	—
Բօրսային գիսօնաներ —	6	4 71/4	0/0
Պետուկ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի —	98	62	—
— 2-րդ —	98	37	—
— 3-րդ —	98	37	—
— 4-րդ —	98	37	—
— 5-րդ —	98	37	—
Ռոկեայ փոխառութիւն.	141	50	—
Նոր 4% փոխառութիւն.	83	37	—
Արեւելեան 5% փոխառութիւն. 1-ին շրջ.	99	—	—
— 2-րդ —	99	—	—
— 3-րդ —	98	87	—
Ներքին 5% առաջին փոխառութիւն.	269	25	—
— երկրորդ —	250	50	—
5 1/2% ընդհան.	102	—	—
Ռոկեայ ընդհան.	169	50	—
Նօր երկաթուղային ընդհան.	98	50	—
5% գրաւական թղթեր կալուած.	—	—	—
— փոխ. երեք. ընդ. մաս.	92	25	—
— թղթադ.	98	—	—
Գրաւ. թղ. Ազն. բանկի.	98	—	—
5 1/2% գրաւական թղթեր խորանի կալուած բանկի.	98	—	—
6% գրաւակ. թղ. խորանի կալ. բան.	101	12	—
— Պօլսաւայի —	100	25	—
— Պիտ. Տուսի. —	100	25	—
— Կիւի. —	101	50	—
— Մոսկվայի —	102	—	—
— Բեսարաբ. Տուսի. —	100	—	—
— Նիփ. Սամար. —	100	50	—
— Վլադիվ. —	100	—	—
— Թիֆլիսի — 72 և — տ. 98	—	—	—
— Բուխարայի — 18 և — տ. 97	—	—	—
Վլադիվ. կալուածի բանկի ակցիաները 700	—	—	—

Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ. 235 — ,
Ռիբինսկ-Բոյոզովի ընկ. — ,
Ս. Պետերբուրգի քաղաքային օրվա-
գացիներ. 93 > 75 >
Մոսկվայի քաղաք. օրվապայիներ. 93 > 50 >
Օրէնսայի — 94 > 25 >
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրվ. 82 > 50 >
Ս. Պետերբուրգի բօրայի արամպրութիւնը
ամուր է:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ԴԱՎԻԷԺ. Ս. Ս. Երկու թէ երեք անգամ կար-
գացիներ ձեր կարծ պատասխանը, և խոստովան-
վում ենք, որ դարձեալ չենք հասկանում թէ ինչ
էլք ուզում ասել:

ՇՈՒՇԻ. Ն. Տ. Մ. Յանձնեցինք պ. փ. Վար-
դանեանցին ձեր ուղարկած 1 ր. 50 կօպ., նրա
թարգմանած Սմայլի «Բնաւորութիւն» գրքի դի-
նը:

ԲԱԹՈՒՄ. Սարգիսեանց. Ձեր անունով կը-
վերլուց մի պատուիրած նամակ է ստացվել
խմբագրատանը: Կամենսկ էք, որ ձեզ ուղար-
կենք նամակը:

ՊԵՏԵՐԲՈՐԳ. Ա. Ղ. Կարծում ենք, որ չարժէ
ուշադրութիւն դարձնել այդ տեսակ մանր բանե-
րի վրա: Սակայն եթէ կամենում էք անպատճառ
հերքել «Աղբիւր» ամսագրի ասածը, ուղարկեցէք
այդ հերքումը այդ ամսագրին, և մենք չենք կա-
կածում, որ նա կը հերքի իր սխալը:

ԲԱԳՈՒ. Ա. Ա. «Մշակը» վաղուց ուղարկվում
է:

Խմբագիր-հրատարակող ԳԻԿՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր

ВЪ ЖИРАРДОВСКОМЪ СКЛАДѢ

Тифлисъ, Дворцовая ул., КАРАВАНСАРАЙ БЫВШІЙ АРЦРУНИ.

ԺԻՐԱՐԴԵԱՆ ՊԱՆԵՍ

Դժբօղայա փողոց ՆԱԽԻՆ ԱՐԾՐՈՒՆԻ քարավանարանում

Ստացված են

ՊԱՏՐԱՍ ԲԵՆԶԵՆՏԵՐ աման տեսակ չափերի

9—10 (2)

ՄԻ ՀԱՄԵՍ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔ ընդունում է գիշերօթիկ և կիսագիշե-
րօթիկ 8-ից մինչև 13 տարեկան երեխաների:

Հարցնել Վանքի փողոց Կողոց № 5.

9—10 (ե. շ.)

ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ

Պատրաստված է Պատեօրի սխառնով, ստացված է Ֆրանսիայից. ֆունտը 50

ըուրլի, ճանապարհածախսով: Հասցեն. Գօրի, Սիմօն Գուլիշաբարովին:

3—3

ՀԱՇՈՒԵԿՆԻՐ

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի

931-ն Գեկտեմբերի 1888

Պ Ա Հ Ա Ն Ջ Ք	Թիֆլիսում	Բազուի բաժն.	Ընդամենը	Պ Ա Ր Տ Ք	Թիֆլիսում	Բազուի բաժն.	Ընդամենը
1. Դրամարկ (առձեռն թղթադրամ).....	104,684—21	57,056—27	161,740—48	1. Հիմնական դրամագույն.....	1,000,000 —	—	1,000,000 —
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում.	3,025—27	230,000 —	233,025—27	2. Պահեստի դրամագույն.....	154,474—72	—	154,474—72
3. Զեղջուռն (Disconto) մուրհակաց երկու ստո- րագրութեամբ.....	2,677,215—45	870,423—30	3,547,638—75	3. Դրամական աւանդներ՝ ա) Պայմանաժամով.....	1,727,210 —	113,499 —	1,840,709 —
4. Զեղջուռն մուրհակաց մէկ ստորագրու- թեամբ, ապահոված սպարանքներով.....	—	—	—	բ) ԳՊահանջ.....	186,952 —	24,650 —	211,602 —
5. Զեղջուռն տոկոսաբեր թղթ., կտրօն. և այլն.	38,111—75	7,678—12	45,789—87	գ) Ընթացիկ հաշիւով հասարակ.	779,858—49	302,898—33	1,082,756—82
6. Փոխառութիւն դրամականով՝ ա) Պետութիւնից ապահ. տոկոսաբ. թղթերի. բ) ոչ ապահ. > գ) ապահանքներ.	912,068—45 204,609 — —	243,587 — 9,645, — 80,870 —	1,155,655—45 214,254 — 80,870 —	դ) Ընթացիկ հաշիւով հաշուած, ապահոված մուրհակներով և տոկոսաբեր թղթերով.....	—	80,107—55	80,107—55
7. Բանկի պատկանեալ տոկոսաբեր թղթեր.	267,451—88	10,989—79	288,441—67	4. Զեղջուռն մուրհակաց պետական բան- կայի թիֆլիսի բաժնում.....	338,895—21	—	338,895—21
8. Ոսկի և արտասահմանի փոխանակագրեր.	103,741—52	1,882—55	105,624—07	5. Մասնաւոր ընթացիկ հաշիւ պետական բանկայի թիֆլիսի բաժնում, ապահոված մուրհակներով և տոկոսաբեր թղթերով.....	560,355—47	—	560,355—47
9. Թղթակիցներ՝ ա) Նոցա հաշիւը (Loro).....	5,894,412—58	—	5,894,412—58	6. Թղթակիցներ՝ ա) Նոցա հաշիւը (Loro).....	5,883,355—42	—	5,883,355—42
բ) Բանկայի հաշիւը (Nostro).....	9,445,195—56	—	9,445,195—56	բ) Բանկայի հաշիւը (Nostro).....	9,618,107—09	—	9,618,107—09
10. Բաժնի հաշիւը կենտրոն. վարչութեան հետ. կենտրոն. վարչութեան հաշիւը բաժնի հետ.	981,741—26 —	— 74,589—66	981,741—26 74,589—66	7. Բաժնի հաշիւը կենտրոն. վարչութ. հետ.. կենտրոն. վարչութ. հաշիւը բաժնի հետ.. 8. Բանկայի բաժնետոմսերու անվճար կտրօն- ների բաշխը 1882, 83, 84, 85, 86 և 87 թ. 9. Զը վճարուած տոկոսներ, աւանդներու, ընթացիկ հաշիւներու և այլ գործողու- թեանց.	79,380—49 — 1,654—71	— — —	79,380—49 — 1,654—71
11. Բողոքուած մուրհակներ.....	—	—	—	10. Ստացուած տոկոսներ և յանձնարարա- կաններ.....	71,500—35	18,304—38	89,804—73
12. Պայմանաժամը անցուցուած փոխառութիւն- ներ.....	4,720 —	2,130 —	6,850 —	11. Փոխանցիկ գումարներ.....	208,328—15	99,777—70	308,105—85
13. Ընթացիկ ծախսեր.....	44,596—15	14,645—51	59,241—66	—	87,812—11	16,570—76	104,382—87
14. Կանկարաւոր և սկզբնական ծախսեր.....	3,461—51	3,113—77	6,575—28				
15. Յետ ստացուելիք ծախսեր.....	12,849—62	673—75	13,523—37				
Բ. Ա.	20,697,884—21	1,631,024—72	22,328,908—93	Բ. Ա.	20,697,884—21	1,631,024—72	22,328,908—93